«. . . էր սա փառաւոր վանք, և ունէր եկեղեցի գմբեթաշէն յոյժ գեղեցիկ ի ձեռս ազգիս Հայոց լեալ, որ և միաբանք իսկ բնակէին ի սմա, բայց ի չարութենէ . . . ի վաղ ժամանակաց երկու հարիւր ամաւ յառաջ փախեան ի վանացն, և . . . աւերեալ զվանքն ի սպառ քակեցին, որոյ եւ որմունիքն միայն այժմ երևին։ Բայց գոյ մերձ եկեղեցւոյն դարպաս մի մեծ իբր պանդոկ, որ ասեն թէ՝ գինետուն վանիցն...» (Պատմ. Երուսաղէմի, էջ 296)։ Հայ միաբանութեան ստիպողական լքումէ յետոյ է որ լատինք՝ 1621ին, անյաջող փորձերով, և ապա, 1725ին, վերջապէս կը տիրանան նոյն տեղերուն՝ իսպառ ջնջելով հայկական յիշատակարանները որ կը գտնուէին վանքին աւերակաց մէջ (Ժանկգրկն. Պատ. Երուսաղէմի, Հար. Ա. էջ 304-5)։

Ստեփանոս Սեբաստացի գրիչը, իր երկու յիշատակարաններուն մէջ, ինչպէս վերեւ տեսանք, Այնքեարիմի վանքը կը կոչէ հոչակաւոր Անապատ եւ իրաւունք ունէր. վասն զի, համաձայն օտար ուղեգիրներու նկարագրութեան, զոր վերև տեսանք, արդարեւ նոյն վանքը հոչակաւոր էր իր ճարտարապետական կառուցուածքով եւ ներքին գեղեցիկ որմանկարչութեամբ. ա՛ն հիանալի եւ հոյակապ յիշատակարան մըն էր, որ կը վկայէր Մամիկոնեանց նախարարութեան եկեղեցաշէն գործոց, որոնց լծորդուած էր դիւցազնական ոգին, որ հովանաւորը եղած էր, ինչպէս Մշոյ Ս. Կարապետին, նոյնպէս Այնքեարիմի Ս. Յովհաննու Մկրտչի փառաշուք տաճարին։